

ԱՐՇԱԼՈՒՅՍ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԿՐՕՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԹԱՐՈՅԱԿԱՆ

ԹԻՒ Գ. 1868 ՅՈՒԼԻՍ.

ԿՐՕՆԱԿԱՆ

Հայոց Ազգի Դարձը ՚ի Քրիստոնեութիւն

(Շարունակութիւն եր. 10)

Թադէոս առաքեալ մի յԱբգարայ նահանգ իր առաքելական քարոզութիւնը ՚ի Հայաստան սկսած ժամանակին՝ Վրէժ Քրիստոսի Տեառն մերոյ երկոտասան աշակերտաց տակաւին յերուսաղէմ էին ՚ի քարոզութիւն Աւետարանին, որ յայտնի է սրբոյն Առաքելոյ պատմութեան մէջ ՚ի գործս առաքելոց. "Նա ամենեքեան ցրուեցան ՚ի գեօղս Հրէաստանի և ՚ի Սամարիա բաց յԱռաքելոցն":

Ա՛յս եղաւ Քրիստոսի համբարձման եօթներորդ տարին կամ ՚ի քառասներորդ ամի փրկչին. ուստի հաստատի կ՚երևի այս բանէն որ Հայաստան ՚ի քրիստոնէութիւն դարձած պիտի լինի երկրորդ ամի համբարձման քրիստոսի,

երբ որ տակաւին Ա՛ռաքեալք էին գնացած յաշխարհ ամենայն՝ ի քարոզել, երբ որ եօթանասունքն ևս տակաւին Հրէաստան և Սամարիա կ՛քարոզէին։

Ժամանակագրական հաշուով կ՛ուզեմք այս, որ Եօթանասունքն փրկչական եօթներորդ թուին կետ համբարձմանն ցրուեցան ի քարոզութիւն. և հապարակ կարծիքով այս ժամանակին կը տանք Թադդէոսին երթն ել առ Աբգար։

Մեր որ ճշդութեամբ քննեմք Հրիստոսի խօստմունքը առ Աբգար իր փրկչական նամակին մէջ և մեր Լուսաւորչոյ վկայութիւնը իրացն ստուգութեան համար, կարող եմք աւելի հաւանականապար ասել, որ Թադդէոս առաքեալը Մատթէոսի քարկոծմանէն ել եօթը տարիով յառաջ եկած է ի քարոզութիւն Հայաստանեայց, ըստ որում փրկչին մեր կետ իր համբարձման կ՛խօստանայ Աբգարու առաքել "զմի յաշակերտաց իւրոց"։

Լուսաւորչին ել "Կետ համբառնալոյ փրկչին մերոյ, կ՛գրէ, Թովմաս առաքեաց զի կեօթանասնից անտի զԹադդէոս ի քաղաքն Եդեսիա"։ Նա արդարև հիւանդին բժիշկ ուղարկելու փոխանակ մեր ինքնին ել կ՛ճանապարհ կետ համբարձման իւրոյ, քան թէ թողուր առաքելոց յաշխարհ ամենայն գնալու ժամանակ։

Ուստի այս հաշուով Հայաստանի ի քրիստոնէութիւն դառնալը վաթսուն տարիով ուրիշ նախընծայ պարծեցող ազգերէն յառաջ եղաւ. այսինքն մինչև Պողոս առաքելոյ Հռոմ գնալը։

Ահա այսպէս Հայաստանեայց եկեղեցւոյ քրիստոնէութեան ճշմարիտ վէպը ըստ իրացն եղելոց կ՛տայ մեզ Մովսէս Խորենացի ազգային հաւատարիմ և վաղեմի պատմիչը, և հաւաստի է մեզ, որ նա անհաւատարիմ տեղէ սառած չէ, այլ ստոյգ աղբիւրէ. զի որպէս ինքն Խորենացին հաստատուն կը կացուցանէ իւր պատմագրութիւնը, երկրորդ գրոց երեսուն և վեցերորդ գլխին մէջ կ՛գրէ որ Աբգարու և Յանատրկայ ժամանակի բոլոր գործքերը գրեց Ղ երուքնայ պատմագիրը՝ որդի Ալշաղդարայ դպրի, և դրաւ զայն Աբգարու դիւանին մէջ Ադեսիայ, որ Աբգարու դիւանադպիրն էր, ուստի կ՛առնու և ինքն Խորենացին։

Քրիստոնէութիւնը որ այսպէս Հայոց մէջ Ադեսիա սկսաւ, անտի ևս բոլոր Հայաստան տարածուեցաւ ի ձեռն Թադդէոս և Բարդուղիմէոս առաքելոց և հետևաբար նոցա յաջորդաց քարոզութեամբ. որոնք մեկմեկէ եկեղեցական կառավարութիւնը յաջորդաբար առնելով, մինչև սուրբն Գրիգոր Լուսաւորիչ հասուցին, որոց գործքերը դնելէն յառաջ կ՛դնենք պատմական տեղեկութիւն ընդհանուր տեսութեամբ Հայաստանեայց եկեղեցւոյ Ա՛ռաքելական յաջորդութեան վրայ՝ քաղելով զայն հին ձեռագիր թերթերէ։

ԱՆԸՆԴՀԱՏ ՀԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Առաքելական յաջորդութեան ՒՂՂԱՓԱՌ Ս. ԵԿԵ-ղեցւոյ Հայաստանեայց։

Հայաստան աշխարհը՝ իւր Քրիստոնէութեան յառաջնութեան պատուով, և յատկապէս առիթով մը մեր փրկիչ Յիսուսէն արժանացած փառքով, ունի նա և այս մեծ պարծանքը, որ իւր ՈՒ. Լուսաւորչեղբօրն հիմը՝ Քրիստոսի և ՈՒ. Առաքելոց քարոզութիւններով գրուելէն և հաստատուն կանգնուելէն՝ զատ Առաքեալներէն սկսելով՝ անոնց (առաքելական) յաջորդութեան անընդհատ շարունակութիւնը երբեք չէ կորուսած բաց՝ զանազան տեղերէ նահանգներէ և քաղաքներէ, գլխաւորապէս՝ Լեսարիա։

Անհպետ եղաւ ժամանակ՝ որ Քրիստոնէութիւնը՝ Հայաստան թէ Ըգգար Թագաւորին միջոցով և պատեհանդն օժանդակութեամբ և թէ յետոյ՝ Անամնաց Անադեոս՝ Բարդուղիմէոս՝ Եիմն Առանացի և Յուդայ Անադեոս Առաքելոց գրաւոր և բանաւոր քարոզութեանց ջանքերով և ճիգերով սկզբնաւորութեան պայծառ լուսէն և ընդհանուր ծաւալումէն զրկուելով, օր առաւ կռապաշտութեան և հալածանաց ... երեսէն նուաղանալու վտանգներու վճռական և ենթակայ եղած էր, բայց և այնպէս՝ երբէք և երբեք չէ պակասած, և ըստ խոստման փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ որոյ Աստուածային և ամենազօր պաշտպանութեան և հսկողութեան ընորհիւ ու ողորմութեամբ իբր՝ թաքուն ադին անդին կ՚յարատևէր, ինչպէս որ ներքին և արտաքին պատմութիւնները՝ այս մասին զմեզ լաւ համոզելու համար՝ շատ օրինակներ և ապացոյցներ ընծայել չեն զլանար, երբ հետազբօսութեամբ և արժանաւոր ուշադրութիւնով փնտռենք, ու մեր մտքերը ըստ ամենայնի ճառաելապէս կ՚լուսաւորեն. յորոց երկուքը յառաջ բերել՝ հաստատութիւն խնդրոյս լաւ և պատշաճ կ՚համարիմ։

Ստեփաննոս Օրբէլեան՝ Սիւնեաց նահանգին Քրիստոնէից համար գրած պատմութեանն մէջ կը յիշէ թէ, "Ըստնք ադին անդին բնակելով անտերունչ կը կենային ու կ՚մնային. և ոմանք Վարուժան լեռը փախչելով հիմնութեամբ իրենց կեանքը կանգուցանէին. շատ ժամանակներով մինչև Ներսէս Աստուածասէրին գալը և համոյն Հայոց աշխարհը լուսաւորելը, շատերուն կ՚ծորվեցնէին (Քրիստոնէական կրօնքը և հաւատք։)

Այնպէս ևս որենացին Ներսէս Աստուածասէրին սնունդը և վարքը պատմելով (նոյա մօր առթիւը) իմաստասիրել և մակաբերել կ՚ուզէ մեզ թէ, Վաղուց աշխարհը, Սեբաստիոյ և Կեսարիոյ կողմերը դեռ Քրիստոնէութեան լոյսը տարածուած կ՚տեսէր։

Շարունակելի

ՊԱՏՄԱԿԱՆ

ՕԴ ԱՐԱՐԱՏ ՆԱՀԱՆԳԻ

(շարունակութիւն եր. 21)

Բայց այս դաշտավայր գաւառները տարուայ երկու բաժինը գարնան ու աշնան օդոց մաքուր բարեխառնութիւն ունենալով, արդարև զբօսանաց տեղեր են հովիտք և ծաղկաւէտ դաշտերը և այն ժամանակ երկրի գեղեցկութիւնը ցոյց կ'տան. վասն զի Ա. Լարատեան դաշտը շրջապատող լեռներու վրա, գետոց և սառնաբուղխ աղբիւրներու եզերքը՝ նոյն իսկ գիւղացի բնիկ ժողովուրդն էլ վրանաբնակ Քրդերի հետ կ'թափառին, հովատուն լեռներու օդը ծծելով. քանի որ ամառը կ'յառաջանայ այս վրանաբնակ ազգերն էլ լեռն ի վեր բարձրանալով, զովագին օդերու մէջ իրենց խաշինքը ձնծաղիկներու վրա կ'արածեն,

Ա. յս գաւառներու մէջ առանձին յատկութիւն ունի Ա. Լարատեան դաշտին օդը Ասիս և Ա. Լարագած լեռներու բևեռական կողմերէն մէկմէկի հանդիպակաց լինելու պատճառաւ. վասն զի այս տեղ տարուայ չորս եղանակի փոփոխման հետ՝ օդն էլ գրեթէ փոփոխական ներգործութիւն ունի:

Ա. ենան անձրևային եղանակին Ասիս գլուխը ձնած ժամանակ՝ Ա. Լարագածոտն գաւառը եղած բերքերը ցուրտը կ'տանի. սորա հակառակ Ա. Լարագածը ձիւնելուն՝ Ասեացոտն և Ա. յլարունք եղածները ցուրտէն կ'խաշին. — Ա. յս պէս և գարնան եղանակին կ'պատահին:

Ամառուան մէջ սովորաբար Ա. Լարատեան դաշտի օդը վնասակար է, ուր է ընդհանրական մայր Արկեղեցին Տ'յոց Ա. լջ Ճածին Ա. Լարագածոտն գաւառին մէջ. որ կ'պատճառէ հիւանդութիւն, դող և տենդ. և այս առաւելապէս ձախնային ջուրերէ, շամբուտ և եղեգնուտ տեղերէն որոնք գրեթէ շատ մաս բռնել են. սոցա մէջ և աւելի բրինձ ցանելով, որ Հայաստանի սովորական բերքն է. այս վնասակարութենանց հետ անթիւ մծախնների վնասն էլ աւելի:

Յաճախ անձրև կ'գայ Ա. Լարատեան դաշտը, երբ որ պարզ օրերը չանկարծ Ասիսի ձիւնապատ գագաթը փոքրիկ ամպ կ'պատի, բոլոր դաշտի մթնոլորտը իսկոյն տարածելով, կ'մթնացնէ երկինքը և յորդ անձրև կ'գայ. այսպէս և կ'լինի երբ որ Ա. Լարագածու հիւսիսային արևմուտքէն սև ամպերը կ'բարձրանան:

Լեռնային գաւառք որ դաշտին շրջապատը կ'տարածուին. ձմեռուայ սաստիկ ցուրտ օրերը անշուշտ վ'այք կ'լինին կորդուաց լեռների հետ՝ Ասանոյ դայեկի պատմութեան անցքին. որ "Պատահէ բքոյ ի լերինս կորդուաց՝ առեալ զմանուկն . . . ի մէջ ստեանց իւրոց, ճնալով ի ներքոյ ձեռանն զերիս տիւս և զերիս գիշերս". խոր. գլուք բ:

Նա առաջնոյն Տիգրանայ, ոյ, ձեան տա-
կը մեռաւ, անդ։

Կը հաստատեն նաև Ագովմայի Ա. ըծ-
լուածոյ և Ղևոնդեան յոյն մատենագրի
գրուածքը. զորոնք Հնախօսութեան
հեղինակը յառաջ կ'բերէ. ա. հատոր.
եր. 42—44։ Ա. րարատեան լեռնագա-
ւառները մարդաշատ բարգրութեամբ
թանձրացած ձիւնի տակ կ'ծածկուին.
ճանապարհներն անգամ անանցանելի կը
լինին անասնոց, որոց մէջէն ճանապար-
հորդք և կարաւանը չկարողանալով ան-
ցնել, շատ անգամ բուքէն կ'խեղդուին,
ինչպես սովորաբար կ'պատահի Արևանայ
ծովի արքունի ճանապարհի վրա, որ ծո-
վի արև մտեան եղերքը պատելով մինչև
Վաղարշապատ նահանգը կ'հասնի, շատ ան-
գամ պատահած է որ բեռնակիր անա-
սունք մարդով մեկ տեղ հղմնակոծեալ
ձիւնը ծովը ձգած է։

Ա. յսպէս են ձմեռ ժամանակ և բովան-
դակ Արիք գաւառի Ճ լրակայ և Աստա-
յեց լեռնադաշտ ճանապարհները Արե-
ւմտեան հիւսիսային ու արևելեան կող-
մէն. որոնք բարձր լեռներու մէջ հարթ
հաւասար դիրք ունենալով ճանապար
հորդել չի լինիր երբեք, մինչև որ ձիւ-
նը չի խտանայ հողմոյ բռնութենէն։

Ա. յս սովորական է մեր երկրի յիշեալ
գաւառներուն, թող որ Աստեացոտն
գաւառը որ Ա. րարատեան դաշտին և
Ա. րշարունեաց գաւառին սահմանակից
է և աւելի ցած, երբեմն այնքան սա-
ստիկ ձմեռ եղած է պարսից իշխանու-
թեան ժամանակ, մինչև վայրենի գա-
զանք ուտելիք ու տեղ չգտնելով, խուռմբ
խուռմբ կ'գային գեղերը կը թափէին.
ընդհանրապէս կարծես թէ Արշա-
կեցւոյ գրածը կ'ստուգեն եղել, որ
'ի Թուին հայոց չէ. (1056). "Ընտանե-
քըն, ասէ, ջղիր ջղիր լինէին և թըռ-
չունք երամ երամ 'ի փողոց և 'ի
տունս տունս մտանէին"։

Ա. յս դէպքը լսելով Արևանայ հիւ-
սէն խանը, հրաման կ'հանէ գիւղերէն
խոտ ժողվել և տանել Աստեայ լանջին
վրա տեղ տեղ ցրուել, որ թշուառ
գազանքը կերակրին։

Շարունակելի։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԿԱԶ ԱՅՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԻՒՆԸ

(Շարան պատմիւն եր. 21)

Ա. սան զի' ինչպես սուրբ գրքէն ժա-
մանակագրական հաշիւները ցոյց կ'տան,
ջրհեղեղը, որ եղաւ յամի աշխարհիս
1657, սորանից ետքը 'Նոյ նահապետը
ապրեցաւ այլևս 350. տարի, իսկ կոր-
ծանումն աշտարակին եղաւ յամի աշ-
խարհի 1812, այսինքն ջրհեղեղէն 155,
ետքը. յորում ժամանակի Հայկ դար-
ձաւ Հայաստան. հիմա 155, տարին ևս
350. Թուէն հանենք, կ'գտնենք դար-
ձեալ 195. տարի 'Նոյին ժամանակ կե-
նաց 'ի Հայաստան. որով հաւաստի կ'ե-

Ա՛րդարև՝ չորրորդ և հինգերորդ կարգի պատմագիրներն ևս կ՛թողունք, որոնք գրեթէ մինչև իրեն ժամանակը պատմագրեցին, Ա՛յլազի պատմագիրները հարկաւ ազգաց նախնի աստուածաշաւթեանց համար ևս խոշ և խնդիր արած կ՛լինէին, ուստի՝ նա կ՛քաղէ Հայկայ աստուածաշաւթեան վրա տուած իր ծանօթութիւնները բայց մեզ այս խնդրոյս հաւաստիքը յուծելու ցոյց կ՛տայ հաւատարիմ վկայ, որ ազգերնուս վերաբերութեամբ ոչ միայն հաւատարիմ, այլև գուխ և իշխան և տէր միանգամայն Ա՛բգար Ութագաւորն մեր, որու համար կ՛գրէ որ Ութադեոս Ա՛ռաքելոյ հրամանաւ Թարգմանեց ինչպէս կ՛երևի բանի ընթացքէն, հրէից լեզուէ պատմ՛ բանական գրուածները, յորոց յիշեալ պատմագրութիւնների հետ՝ անցից ժամանակաց թիւերը կ՛սուգէ ինքնին պատմագիրը յասէն՝ ''Հայց պարտ է հանճարեղ մտաց ոչ տկարանալ յաղագս աւելի և պակաս բերելոյն զթիւս ժամանակաց քանզի յոլով զանազանութիւնս գտանեմք յՀօթանասնից և յայլոց Թարգմանչաց գրութիւնս, և մնանդ, զոր Ա՛բգար ազգայն է Թարգմանեալ հրամանաւ Թադէոսի առաքելոյն. և զոր ստուգեաց Յակովբ Ուրհայեցին, մտեալ ընդ հրէութեամբ յաղագս կարծելոյ, թէ չետուն զբանդակ գրեալս Իւրեանց ձշմարտութեամբ՝ հեթանոսաց սակս նախանձու''։

Ա՛ս արդարև ով չի կարծեր որ Ա՛բ-

բևի թէ՝ Հայաստան ջրհեղեղեն ետքը մինչև Ագոյ վախճանը 350 տարի (յամի աշխարհի 2097) և անտի մինչև Ա՛բրայի տարրապաշտութեան ժամանակները, որ ըստ կարգի պիտի յիշենք, աստուածապաշտութեան մէջ էր։ Ուրեք են, զոր պատմաբանք իրենց պատգրութեան կարգագուշք՝ աւելորդ համարել են, բայց մէկ ազգի սկզբնաւորութեան և նախապատմութեան համար՝ ամենահարկաւորնիւթ։

Հիմա կ՛ձայ որ, խօսքենք պատմաբանից խօսքերը ևս թէ Հայկայ աստուածապաշտութեան համար որոշ գրած են՝ թէ ո՛չ. որքան որ նորա գիտելը մերժելուց ևս այս յայտնի կ՛իմացուի, որ ինքն ձրիաբար աստուածապաշտելով, չուզեց գիտել ճանաչել և իբրև աստուած պաշտել կամ հնազանդել նորան. այսուամենայնիւ պատմաբաններէն ոմանք յայտնի ևս կ՛գրեն այս հաւաստութիւնը, և այս կ՛գանենք Ագիս յետ Ա՛ղորսպատմագրութեան մէջ։

Պատմութեանց տեղեկութիւն ունեցողներին յայտնի է, որ յիշեալ պատմաբանը իրեն ժամանակագրական պատմութեան նիւթը քաղած է,

Ա՛նց՝ հրէից պատմագիրներէն, որոնք են՝ Ա՛փրիկանոս, Եսեբ, Հեքսիպոս և Յովսեպոս, որոնք Քրիստոսէ յառաջ պատմագրեցին։

Երկրորդ՝ Ա՛նանիա կրօնաւոր, Աբեդիոս պամփիլեացի, Օսիմա, Ագրիպա, Ալեքսանդրոս, որոնք գրեցին մինչև ցմոքրն Ալեքսանդ։

գար Թագաւորը աւելի եռանդ ունե-
նար հետամուտ լինելու ստուգել ի՛
Թիւս ազգաց և մեր նախնւոյն Հայկայ
աստուածապաշտութիւնը մինչև կա-
պաշտութեան ի՛ Հայաստան մտնելը Ա-
րայի օրէն. ինքը Հայոց աճապաշտու-
Թեան ծայրը լինելով և քրիստոնէու-
Թեան անդրանիկ Թագաւոր ազգին, ա-
ւելի ևս եռանդով գտնելու հետամուտ
կ'լինէր իր ազգին նախնի աստուածապաշ-
տութեան ծայրը, և նորանով գոհ կը-
լինէր, որ իրեն ազգը սկզբէն ճշմարիտ
աստուած որ կը պաշտէր, նոյն ճշմարիտ
աստուածպաշտութեանը ինքն եղաւ ա-
ռաջնորդ։

Ասկ մեր խնդիրը այսպէս կ'լուծանէ
սուն պատմագիր. "Ամենք ասեն զ'նոբ-
րովբ յաշտարակին անկմանէ մեռանիլ,
բայց մեք ստուգեցաք յետ ժամանակի
սպանիլ նմա ի՛ Հայկայ որդւոյ Ամորգո-
մայ որդւոյ Ախրատայ, որդւոյ Դամբրայ
որդւոյ Յաբեթի. զի ոչ արար Հայկն զզ-
պատակեր Բելայ և համարեցաւ զնա աճ.
և եկն Բել ի վերայ նորա ծանր ամ-
բոխիւ և սպան զնա Հայկ",

Ազգային պատմիչներէն՝ այս բանիս
վկայ կ'երևին Մխիթար գոշ և Ա-
դան բարձրբերդցի, որոնք կ'գրեն Հայ-
կայ համար, որ Բելայ պատկերը ջախջախե-
լու համար՝ նորանից ապստամբեցաւ, և
կենազլուխ եղաւ նորան։

Շարունակելի։

ՆԱՄԱԿԱՆԻՓ ՆԱԽՆԵՑ

Խաչիկ Կաթուղիկոսի առաջնոյ Կոնդակը վրիջա-
կան 976. թուին

Խաչիկ Կաթուղիկոս առաջինն է սա, ինչպես Կոնդակի Թուականը ցոյց կուտայ որ յամին 972. Եպիսկոպոսութենէ, Ա-
րշարունեաց ընտրեցաւ Կաթուղիկոս ազգային ժողովով հրամանաւ երորդն Աշոտ Թագաւորի, Անի արքայանիստ մայրաքաղաքին մէջ Սուրբ Կաթուղիկոսի մհուանին եղաւ, որ Ա-
ծրունեաց Աբուսահլ Թագաւորը սքսորեց ի Կո-
տորոց ասացեալ բերդը ի Ասպուրա-
կան։

Յաբգէն զոր եպիսկոպոս կ'ձեռնադրէ Խաչիկ Կաթուղիկոս 'ւ,ախաւվկայի Թեմի վրա՝ Ա-
հան Կաթուղիկոսի պատմուճ անցքէն կ'երևի, որ կուսակից էր Կա-
թուղիկոսին՝ Ա-
հանը ի Կաթուղիկո-
սութենէ ձգելու ժամանակին, ուստի երբ որ 971 Թուին Սուրբ Կաթու-
ղիկոսը գնաց Ա-
սպուրական բազմա-
Թեամբ կրօնաւորաց, ուր վախած էր Ա-
հան, նորա հետ էր և այս Յաբգէն վանական կոչեցեալ Սիւնեցի։

Ա-
սպուրական նահանգի այն մասն էր, ուր է Ա-
. Սուրբ Նախավկայի վանքը, Սիւնեաց նահանգին յարևմտից սահմանակից լինելով, որուամ հեռանա-
կան է Թէ աւելի ծանօթ լինէր Յաբգէն և վանահայր նախ Նկայի վանքին, յիշեալ մասին վրա Կաթուղիկոսը եպիսկոպոս կը ձեռնադրէ զՅաբգէն իւր իշխանու-

մանկանց եկեղեցւոյ և բարձր հրամանի բարեպաշտ թագաւորի և Տեառն Յակ կայ Հայոց կաթուղիկոսի, եղև ձեռնադրեալ Ա. Էջմիածնի մէջ Ա. Հրեշտակապետապետն ի ե տարին Ա. Յովհաննու Մկրտչին՝ եղև կատարումն շինուածոյ և նորոգութեան Ա. Տաճարիս Ա. Գրիգորի՝ Նախավկայիս Քրիստոսի և աշխատութեամբ Տեառն Յակոբ եպիսկոպոսի, որ էր առաջնորդ Արտազու, և ի սուրբ Տաճարիս կայ հանգուցեալ սեբեռեալ բեհեզեան բազկաց Յիսուսի և արքայական Թագից փուշ պսակէն Քրիստոսի ձեռաց գ. հատ մանանայն, և ի բազմահատիկ սրբութենացս որ աստ կան հաւաքեալ։ Այս ետուս հնձէքս և հայրենիքս և գաստակերտ և ընծայ անհին Աղաւարդայ վանաց սուրբ Աստուածածնին նախավկային, Տիրամայր սուրբ Էջմիածնին, և սուրբ Գէորգ զաւրավարին անդառնալի և բարձր հրամանաւ մերով թեմ և վիճակ, զոր և սահմանեալ էր նախնեացն մերոց և սուրբ հայրապետացն մերոց Տեառն Ներսիսի Թուխն մերոյ սուրբ Լուսաւորչին։ Նախ առաջին հայկական և հռչակաւոր մայրաքաղաքն Նախիջևան ի նոգ գաւառն բոլորովին, ի հոյ որ է Ոստանդ գաւառ և ամենայն վիճակն իւր բոլորովին, մինչ ի Նուան ի Արաքսայ, որ բաժանի Առաքելոց յերկրէն և գնայ մինչև ի Արտաշատ, և բաժանի ի Ալմաստայ, ի յԱրաքսէ մինչև ի Արանդ . . . Արանդ իւր վիճակովն Իջևինքաւն իւր երկրովն գնայ մինչ ի դղեակն Ատոր-

Թեան չորրորդ տարին. Նրան վիճակ և թեմ կ'հաստատէ Ա. Շուտ Թագաւորի հրամանաւ Նախիջևանայ գաւառը հետևեալ կոնդակովս որ արևելեան մասն է Այ ազգուրական նահանգի, այս կոնդակն է որ ուղիղ հարիւր ինսուն և երկու տարուան ազգային իրևնից հազարագիւտ հնութիւն կ'փութանք հրատարակել Ա. մագիս միջոցաւ ի տեղեկութիւն Ա. զգայնոց, ուրիշ ժամանակի թող տալով քննութիւն առնել կոնդակի գրչութեան վրա և նաչխիկ կաթուղիկոսի կենսագրութիւն և գործքերը գրել։

Ընդամբ անեղին Աստուծոյ Հաւր և ի փառս Յնելոյն ի նմանէ անեղապէս որդւոյն միածնի և ի փառս բղխեցելոյն յԵրիքենէ Հոգւոյն Ճշմարտի, Այս մեր գիր հոգևորական բարձր հրամանի հաստատութիւն է և աւրհնութիւն և ի հոգևոր հովուութեան Տեառն Նաչխայ Հայոց կաթուղիկոսի, և հարաւոյ հայոց թագաւոր Ա. Շուտ յորջորջեալ անուամբ բարեպաշտ և մեծ Շահանշահի. Նա Ա. Շուտ թագաւոր թագաւորաց ամենայն տիեզերաց, եկեալ ի սուրբ ուխտս աստուածաբնակ Նախավկայիս հանդերձ զաւրաբաք՝ թագաւորաբաք և իշխանաբաք Տեառն Նաչխայ Հայոց կաթուղիկոսի՝ երկրպագեալ սուրբ տաճարիս հին Աղաւարդայ վանից, երանելի կրաննաւորս աստուածամեծար մեծանուն Տեառն Գրիգորի հայկազնոյ նախաշինաւղ և ի Քրիստոս ծնաւղ հոգևոր գառանց . .

նիչքն դատին ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. որ է աւրհնեալ յաւիտեանս ամէն, Տեառն Յակոբ կաթուղիկոսի ամենայն Հայոց Պատրիարգ առաքելական Տանս առաքեցաք գրաւորական աւրհնութիւն հրամանաւս մեծանուն երջանիկ Տէր Բաբգէն Աղբեպիսկոպոս գալ առնել և առաքելաբար շրջեցայ ընդ միջի ձերում վարդապետել, խրատել և ուսուցանել ի յաւրէնս և ի պատուիրանս Տեառն. կալ յանապատութեան ի տուէ և ի գիշերի, տալով զանձն աւրինակ ձեզ ամենեցուն ինքն ապրեցայ և ձեզ ուսուցի սրբութեամբ, արդարութեամբ, խոնարհութեամբ և երկիւղիւ, սիրոյն առ Աստուած և առ ընկերս իւր եղբայրսիրութեամբ, աղքատասիրութեամբ, ողորմածութեամբ, և աղաւթիւք. քինել այցելու որբոց և այրեաց, տնանկաց և կարաւտելոց կարեկից սիրոյն Քրիստոսի, կոչեցեալ զարժանաւորսն և զիմաստունսն ի կարգ և յաստիճան կիսասարկաւագութեան, և քահանայութեան, կալցի և հրամանաւս մերով ի վերայ ձեր իշխանութիւն առաքելական կապել և արձակել յերկինս և յերկրի, զնեղութեալսն կշտամբել և յանդիմանել և զողջացեալսն ընդունել յապաշխարութիւն, որով և դուք ամենեքեան սիրելի որդիք ի Քրիստոս, զաճապատիս և զառաքելաշնորհ Աբգեպիսկոպոսդ մեծանուն Տէր Բաբգէն մեծաւ պատուով յոյժ սիրով ընկալարուք որպէս հրեշտակ Աստուծ և զառաքեալ Քրիստոսի, և ամենայն հոգևորական խրատուց դորա, որ ի շահ և ուղիղ է հոգւոց ձերոց, հնազանդութեամբ

վուս, ի Աղատ և ի Գիրան. ի Ջուղայ և իւր վանքն. ի Աստապատ և իւր վանքն, ի Շամբ և իւր վանքն, ի Ջուղաեղն, ի Արարքն և իւր վանքն և յամենայն Գիտապաշտացդ յարևելեան հարաւոյ, տուաք ընծայ և հայրենիք անդադանալի և բարձր հրամանաւս մինչև ի գալուստն Քրիստոսի և ահեղ դատաստանն, և ով որ իշխեսցէ ի մեծաց և ի փոքունց արգել առնուլ կամ խաւսել չար բան, և որք ի ժամանակի ժամանակի կան ի պաշտաւն սրբութեան, անմոռաց յիշել պարտիք ի Քրիստոս. Եւ յայսմ հետէ ի գաւառաց նահմանեալ թեմիկն և վիճակն Գիտապաշտաց ազգիդ կամ տանուտեարք յերկրէն կամ գեղջէն մեծ մըրդ կամ փոքր այս նահմանեալ թեմիս և վիճակիս և յամենայն անդաստանաց և աւանեայն արմանք ևերաւոնք որ տալ կայցեն ի Աստուծոյ և Աստուածոյ որք ջանան հարկս պահանջել կամ ընդ չարու առնել, այնպիսիքն նզովեալ եղիցին յ. ժ. ը. Հայրապետացն. վարձքն գիտորևայ և գովդանայ առցեն, մանն և բաժին ընդ Յուդայի և ընդ կայենի և խաչահանուացն եղիցի ամէն. Եւ աւարտուաւ եղև բանիս և գրիս ձեռամբ մեծանուն Տեառն Յակոբ կաթուղիկոսի ամենայն Հայոց և տէր Բաբգենի և մեծ իշխանացն Աղղարբիպի իշխանի Հայոց և Ա ղբաց, Ա սակ իշխանի Աիւնեաց, Գրիգոր իշխանի Աղաւնեաց, Գեորգ իշխանի Գնունեաց, Շապուհ իշխանի Ա րծրունեաց, Նամակիս և Միքելիս կատարողքն աւրհնին Աստուածոյ և յամենայն սրբոց, և խափա

ունկնդիր լերուք։ Այլև կանոնեալ հասև զերաւունք զոր պարտիք տալ Աստուծոյ՝ բաժին Քրոջ, զհաս տանց քահանայից և զամ ընտանեաց նոցա, զերախտիս հնձանոց, զտեառնականս, զխաչաւարն նէքենն և զսրբանուէրս զերաւունս մատաղաց, կենդանեաց և ննջեցելոց, բազմականս և զանկարծամահ և զառակամահ, և ամենայն իրաւունս կենաց և մահու, լիով անթերի տուք ի ձեռս դորա զօարթ և առատ զի զտուրս զուարթ և առատ սիրէ Աստուած։ Այս մի՛ ոք իշխեցէ հակառակիլ սմա և հրամանիս մեր, և արգելցէ իրաւունք տալոյ կամ խոչընդոտեցէ, կամ (առ) աւազ անկանի և յոչ հատուցանէ սուրբ նախավկային վանաց, զի որ ոք դմա, կամ հրամանիս մեր հակառակ լիցի, նա այնպիսին ե ընդ անիծաբքն, ներքոյ բանադրանաց, զանէծան Լայենի առ ցեհ Աստուծոյ. զման Յուդայի և զխաչահանուացն։ Որով աւրհնեալքն՝ դմանէ՝ աւրհնեալ եղիցին Աստուծոյ կապելքն՝ նմին մնասցեն մինչև զղջասցին։ Ամանորոյ՝ մտանել դորա և հոգևորականն բարձր հրամանիս մերոյ առ ձեզ և սուրբ Լիոնիս՝ իջցե և շնորհք ողորմութեան Աստուծոյ յերկնից՝ ի վերայ ձեր եւթնապատիկ լցուսցե զձեզ ամենայն հոգևոր և մարմնաւոր բարութեամբ. բարձցե՝ ի ձենջ զամենայն ցասումն և զպատուհաս և զտարաժամ մահ յաշխարհէ ձեր. տացե և ձեզ շինութիւն, անդորրութիւն խաղաղութիւն, բուսոց և տնկոց և ամ անդեոց ձեր յաջողութիւն և քաղցր պտղաբերութիւն պահարեղէն անասնոց ձեր անսխալ ծննդա-

կանութիւն և ամ բարեաց ձեր լիութիւն և առատութիւն։ Այս աւրհնեցէ զձեզ զամենեսեան Քրիստոս Աստուած մեր, որպէս զի զառաքեալ կեանս վայելիցէք և երկնից արքայութիւն և թագաւորութիւն հատանիցէք ընդամ սուրբս՝ ի Քրիստոս Յիսուս՝ ի տէր մեր որ է աւրհնեալ յաւիտեանս ամէն։ Շ Նորհեցաք՝ ի ձեռն դորա ձեզ պարգևս հոգևորական ղեկն աւրհնութեան սրբալոյս և զաստուածագործակ սուրբ տանն՝ ի լուսաւորութիւն նորաճնելոցն աւազանաւորդեգրութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ և՝ ի ժառանգակցութիւն Քրիստոսի Աստուծոյ յուսոյն մերոյ. զնոյն՝ ի ձակատն նշան հատատուածք, յաճախումն քահանայութիւն՝ ի նորոգութիւն սբ եկեղեցւոյ Քրիստոսի Աստուծոյ մերոյ աւրհնելոյն յամենայն յաւիտեանս ամէն։

— Այսիկ ծառայ Յիսուսի Քրիստոսի ընդհատ և ողորմութեամբ նորին Կաթուղիկոս ամենայն Հայոց։

— Գրեցաւ ձեռամբ Գաթանագեղ դպրի Ե. Ի. Ս. Տումարի Ըրամեան հնացուածի։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

յՕրագրութեանց Սիմոդի Ս. Էջմիածնի.

Ի 14. յունիսի. նշանակեցաւ՝ ի պաշտօն ծառայողի Սիմէոդի Ա. Ալջիածնի՝ արտաքոյ շտատի, և հաւատարմատար վանն վիճելի Ըստիճանաւոր Պ. Յովհաննէսեան Ակրտչեան Յովնաթանեանց.

— Ի նոյն թիւ նշանակեցաւ՝ պաշտօն Թարգմանի Վինօգի և ուսուցիչ Ուռաց լեզուի՝ ՚ի Չեմարանի Ս. Ղազարու՝ Վաղերմանցի Պ. Մարգիս տէր Վեհորգեան Մարուքեանց։

— Ի նոյն թիւ նոյնպէս Թղթատրեցաւ Վինօգէն Նորոգութիւն եկեղեցւոյն Կարասուբազար քաղաքի վիճակին Հայոց նոր Ղախիջևանայ և Ռեսսարաբիոյ։

ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ

Որբ Ազգոյս ուսումնական Հանգանաժողովը կարևոր դասեր լով Ուսասանի Թեմերուն մէջ գտնուած ազգային ուսումնարանաց համար ստոյգ Տանուքիւններ ստանալ, ու Եհափառ Կաթողիկոսի հրամանաւ առաջարկեց վճակաւոր Ազնուորդաց, որպէս զի ոգւոյ ըստ կարի փութով ջանան հասուցանել առանձին առանձին ցուցակներով յետագայ տեղեկութիւնքը։

ա. Որբ և որքան են ուսումնարանները և Տխական դպրոցներ, որ կ՚ստորադրին Իւրաքանչիւր Թեմի հոգևոր իշխանութեան։

բ. Որքան է Տեսչաց, Հոգաբարձուաց, ուսուցչաց Թէ՛ Թոշակաւոր և Թէ՛ Ձրիաւարժ ուսանողաց Թիւը և ինչ ուսումն կ՚ուսանողուի վարժարանաց մէջ։

գ. Որպիսի նիւթական աղբիւրներէ կ՚պահպանուի ուսումնարանաց գոյութիւնը. ուսումնական և տնտեսական վարչութեան մասին օրքան դրամ յատկացած են. և տարին որքան մնաւք և Տախք կարող են ունենալ։

դ. Իւրաքանչիւր ուսումնարան և դպրոց քանի տարիէ հետէ բացուած է, և որպիսի բարոյական և ուսումնական դաստիարակութեան յառաջադիմութիւն կ՚տեսնուի նոցա մէջ. և եթէ յայտնի չի երևիր յաջող դրութիւն՝ որպիսի խափանութիւն պատճառներէ յառաջացած է։

Հետևաբար Հանձնաժողովը հարկ համարեցաւ առաջարկել ևս, որ ամեն Ազնուորդք և նոցա Փոխանորդք ամէն գիւղօրիէց մէջ մանուկներ դպրոցներ բանալու փոյթ ունենան, և քահանայքը ուսուցիչ և դաստիարակ կարգեն։ Գիւղօրիէց եկեղեցիքը եթէ ունին սեպհական դրամ, նոցա տոկոսիքէն մանուկներ Թոշակ յատկացնեն իւրեանց դպրոցները. և երբ որ չեն բաւեր նոքա՝ դրամագլուխն միայն մի մասը Տախս անեն, գիւղական աղգային մանկութիւնը բոլորովին տգիտութեան մէջ չթողելու համար։

Ամէն կային կենաց ընթացիկ մէջ յայտնի է որ, զօրավարաց գործունէին զօրք կ՚քաջալերին. և հոգևոր Հովուաց ջանասիրութենէն ՚ի լուսաւորուի հօտի՝ ժողովուրդք նոր ոգի կառնուն ՚ի դաստիարակութիւն և ՚ի յառաջադիմութիւն

Ա. ԵՀափՀռ ՏԵր

Ինչպես ամէն տարի վայելուչ տուրքութիւն է եղած տուրը Ա. Թոռոյս կողմանէ Երևանու հոգևոր ուսումնարանին աշակերտացը տարեկան հարցաքննութեան համար քննիչ ուղարկելը, նոյնպես Ա. ԵՀափՀռ ՏԵրութեանդ հրամանաւ նիւթական և բարոյական գործոց մէջ։

Ըստ այսմ մեր ազգային գրեթէ ամէն տեղէ տեսնալով ու լսելով իւրեանց հոգևոր հովուապետի և Ա. Կաթողիկոսի ամենայն հայոց ջանքը և ուսումնասէր եռանդն՚ի գաստիարակութիւն և՚ի լուսաւորութիւն մանկանց և՚ի վառաջադիմութիւն դպրոցաց, կ՚քաջալերուին թէ քաղաքները և թէ գիւղերը եղած դպրոցներու զարգացման և յառաջադիմութեան պատուէրը ջոյց տալ, յորմէ և յօրինակ բոլոր ազգայնոց։

Երևան քաղաքի հոգևոր Դպրոցի տարեկան հարցաքննութենէն որ եղաւ ի 11 յունիսի ամոյ հրամանաւ սրբազնագոյն Հայրապետին մերոյ ընդ ձեռն Ընդրէսս Եպիսկոպոսին՝ կ՚երևի հետևեալ յայտարարութեամբ աշակերտաց ուսման յառաջընթացութեան պատուէրը զոր դիւրահասկանալի լինելու համար աշխարհաբառ կհրատարակեմք՚ի խրախոյս ազգային դպրոցաց, ուսուցչաց և հոգաբարձուաց և որ մեծն է, խրատանչիւր՚ի նոսին ուսանող աշակերտաց։

Վեհափառ Տէրը վճռակեցաւ նուաստիս նոյն Ա. արժատրնի տալոյց այս տարուան քննութեանը ներկայ գտնուիլ։

Ուստի գնալով Երևան քաղաք, իւրաքանչիւր համաձայն վճռակալին Ընդհանրին կարգադրութեան, որ կ՚ծանուցանէր ազգային հոգևորականութեան հարցմանց առարկան՚ը և կ՚հրաւիրէր հանդիսակից լինելու նշանակեալ ժամերուն սկսելոց հարցաքննութեանը ամոյս 3ին։

Առանց առարկաները էին Աստուածաբանութիւն, Սրբազան պատմութիւն, Հայերէն վերականութիւն, քաղաքական և ուսումնական Աշխարհագրութիւն, Հնութիւն, Հայոց և ընդհանուր պատմութիւն և Ուսերէն։ Աշակերտաց, մանաւանդ երկրորդ և առաջին դասատանց մէջ գտնուածներուն յառաջադիմութեան լաւ վերահասու լինելու համար՝ ըստ մեծի մասին ինքնին կ՚քննէր մանրամասնաբար և օգնական կ՚լինէին ինձ ուսումնական քննիչներ աւետեան ազգայնոց։ Ընդհանուր մէջ ըստ նպատակի կ՚ջողէ պատուհասան ուսուցիչներ եղան։ Մանաւանդ Սրբազան և ազգային պատմութեանց մէջ. միայն Հայկական վերականութեան ուսումն մանաւանդ բաւար թոյլ կ՚տեսնուէր։ (Մի քանի աշակերտներ և եթէ այս մասին բաւական վարժ էին համարձակ և ուղիղ պատասխանատուութեան)։ Սակայն սորա պատճառը ոչ այլևս կ՚համարիմ, եթէ ոչ փոյթ ընդ փոյթ Հայկական դասատուաց փո-

ՏԷր Պ. աղարեան։ Ընդհանուր դասատան մէջն՝ Պ. Տ. Յովհաննէսեան, Լուսինդ Ա. Ադէոսեան, Տիգրան Պէրբէրեան, Յարութիւն Գալստեան և Պրիգոր Տէր Յովհաննէսեան։

Սակայն թոյլատրեցէք ինձ Ա. Եհափառ Տէր, հետեւցնելու թէ որչափ դասատուքը գոհունակութեան և քաջալերութեան արժանի կ՚համարուին, այս ինքն յիշեալ Պրիգոր վարդապետը դասատու Հայոց, և ընդհանուր պատմութեան, Աշխարհագրութեան և Լուսաբանութեան Օրիւնացի Պ. Յակովբն կարապետեան և Լուսոց լեզուի դասատու Պ. Պիտանապետեանց, ուսումնական երիտասարդները. որք չեն խնայեր իրենց աշխատութիւնը՝ի գործ դնելու աշակերտաց յառաջադիմութեան հասար, այնչափ և նկատելի էր հանդիսական համագեաց սակաւութիւնը։ * * *

ԳԱՐՈՒՆ

Գեղեցիկ գարուն
Նշոյնակ սիրուն
Քեւ քնար ընութիւն
Եւ վարդ գեղգեղուն։
Ալիւրը, գետք վճիտ
Խաղան յորդահիտ
Հովտաց ի մարմանդ
Ի գաշտ դարսանդ։
Խոյտն դաշտք, հովիտք
Ծործոր ու լերինք,
Թռչունք թևակին
Ուրախն ի վարդն

սեւ ևը այսվը ժամանակին մէջ որ աշակերտը յետադիմութ և շիտիք դասատարակութեան առիթ կ՚լինի։ Այսպիսով առանձնայնիւ գոհունակութ արժանի է Պրժանապատիւ Պրիգոր վարդապետն Տ. Պատգէոսեան, որ վճռակային առենին նախանձամութեան պաշտօնը ունենալով հանդերձ՝ ի սիրս յառաջ տարած դասատուութեամբը ըստ կարի կաշխատի Հայոց լեզուի ուսուցչութեան որոյ ընթացք շարունակելու եթէ ունենայ առաջիկայ ուսման պարզ և դիւրիմաց Ներածութի՝ և ոչ կէս դար յառաջ հեղինակած Հ. Յամբերանին, որ դժբաղդաբար Աղասափանի նման շատ ազգային ուսումնարանաց մէջ կ՚գոյ ծածուկ իբրև ընտրելագոյն դասագիրք։

Հինգ պատուոյ մէջ պաշտօնս վերջացնելով՝ աճապարել աճապարիկ պատիւ ունիմ հնել կայացնելու ձեր Ա. Եհափառութեան մի քանի աշակերտաց տգիտիկ և ոտանաւոր շարադրութիւնները և վայելչագրութիւնը քննութեան և վարձատրութեան արժանապատիւ աշակերտաց պնդանց ցուցակն ներկայելով որ բարեհաճիք ընդունել նոցա զանազան գրեանք՝ի պարգև և՝ի խրախոյս, որք են երկրորդ դասատան մէջը Հ. սրբազնագոյն Աղաքեանեանց Պետրոս Պատուանաբեան, Պետրոս Պրիգորեան, Յովհաննէս Պրիգորեան Լուդուս Տ. Լուսակեան, Ստեփանոս Տ. Յարութիւնեան, Պրիգոր Տ. Ստեփանեան, Ա. Հան Տ. Յովհաննէսեան և Յովսէփ

Գառն, ուլն ու մկլին
Ի կանաչ դաշտին
Եւ խաշինք կայտին
Խումբ խումբ ի հովտին։
Դու տես և ըլըղ
Ծաղիկս ի ծածկոց։
Ըզնոյն և ծառոց
Եւ տերև անկոց։
Քև արդ և մնկունք
Հրճուին վերթ վտալ Թուն
Իբրու ի գարնան
Ընդ ջեռն յարութեան։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՕՐԱԳՐԱԼՈՒԲՔ

Կոստանդնուպոլսոյ ազգային Օրագիրք վերջապէս հրատարակեցին ի ցաւ սրտի բոլոր Հայազգիս տարաժամ մահ Վեհափայլ Աղթոն Գրիգոր Եփենտիի։ որոյ հիւանդութեան համար ի փալիզ երեք ամիսք հետէ կ'գրէին. որ հերութեան պաշտոններու մէջ իր աշխատասիրութեամբն ու բանիբուն հնձրովը ստիճան առ աստիճան բարձրանալով իբր ի փարիզ եղած միջոցին ևս ջաճկաց տէրութեան հաստատակաց շինուածոց պաշտօնեայ եղաւ. որով հինգ Մասիս շաբաթագիրը կ'գրէ, առաջին անգամ քրիստոնեայ ազգերէն Բ. Դրան նախարարաց կարգը անցնելու պատիւն ունեցաւ։

Եճնագոյն հարուած է այդարև ազգութեան մայ մնոյն։ երբ նորա իմաստուն, բանիբուն և հանճարաւոր անդամներէն մէկը կատկի տարաժամ մահուամբ, —Ես այսպիսի բարեյական հարուած եղաւ մեր Ազգութեան մարմնոյն Վ. Գ. Աղաթոն Եփենտիի մահը, որ իբր ազատամիտ գաղափարներովը ջաճկաստանի մեր Ազգայնոց մեծապես յառաջադիմութեան յոյս կտար արքունի պաշտօնակատարութեանց հետ Կ. Պոլսոյ ազգիս կենդրոնական վարչութեանց մէջ ևս զանազան պաշտօնավարութեամբը։

Ցաւակից կլինինք Արարատայ միջոցաւ ջաճկաստանի մեր սիրելի ազգայնոց. և մեր հոգևոր ուխտին մաղթանքը ի հեռուստ աստի խառնելով հանգուցեալին յուղարկաւորաց ազգային բազմութեան ձայնի հետ կինդրենք ԱՍտուծոյ հանդիստ և երկնից արքայութիւն վաստ հոգւոյ Վ. Գ. Եփենտիին և նորա վշտակիր ընտանեաց ու բազկամացը մխիթարութիւն ի հոգւոյն սրբոյ, որ սփոփիչն է ամենայն սգաւորաց և կաղաչեմք ի նմանէ որ պարգևէ ազգերնուս միշտ այնպիսի հանճարաւոր գլուխներ, որոց կարօտութիւն շատ ունի։

ԱՈՒԱԾՔ *)։

Որ զերկիւղածն սիրէ, սերտ արձան կանգնէ ուղ Աստուած և անհաշտ թշնամութիւն առ սատանայ։

Ջսէր և զերկիւղ Աստուծոյ արա քեզ խաբէութեամբ չշնորհես։

Ջօրացիր չարչարանաց Քրիստոսի, և համբերեա վասն նորա, զի վայելեսցես յանանց բարութիւնն։

Որ աստ զմարմին դարմանէ, ի յաւիտենական հանգիստն ոչ մտանէ։

Հնազանդեա սիրով և աղաթեա յուսով. աշխատեա հաւատով. պատասխանեա յերկնային հարցանիցն։

Զոր ինչ ստուեր քեզ շնորհս տայ, ի պետս սրբոյն սպասաւորես, զի շնորհք առատասցին, և դու փառաւորեսցիս։

Կրօնաւոր մի թմբնաւէր՝ խոզի նման է, ի ծուխացեալ մեղուն հեղձնու։

Արտասուք լուացումն է մեղաց. և յոգւոց հանելն ապաշխարութիւն. ապա որ զամենայն ժամանակս կրօնաւորական կարգօք անցուցանէ ի սուգ և ի տրտմութիւն, նա զդրախտի երանութեան զիարան ժառանգեսցէ։

Որ զեղբայրն տեսանէ, և տրտում կայ յաղթեալ է ի կեղծաւորութենէ։

---

*) Աղն, կ կղզացւոյ Ստաճնեցւոյն կոստնուն, ,,գեշահ խոտ ամենայն կրօնաւորաց,, ասացեալ ինմանէ։